



Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԷՏԱ ՔԱՐՈՋՈՒԹԵԱՆՑ»* (իմաստուն ասույթներ քարոզների համար)

51. Լաւագոյն է ամենեւինք գանձ առնել զհոգեօք, այսինքն՝ հաղորդութեամբն, քան անմաքրապէս մերձեցալ:

52. Լաւագոյն է ոչ գոլ և ոչ կեալ, քան չարաչար գոլ և կեալ:

53. Ոչ է պարտ արտաբերել խօսս. եթէ ոչ հրամանաւ բանականին:

54. Որպէս օգուտ է լոյսն աչաց, նոյնպէս և հաւատն՝ մտաց, որպէս ոչ որ առանց լուսոյ կարէ ճանապարհ երթալ, նոյնպէս առանց հաւատոյ ոչ որ կարէ երթալ առ Աստուած:

55. Ընթերցումն Սուրբ Գրոց դիեցուցանէ, խոկումն՝ կերակրէ և աղօթքն՝ զօրացուցանէ:

56. Զի՞նչ է հաւատալն յԱստուած եթէ ոչ հաւատով և սիրով երթալ առ նա և միանալ յանդամս նորա:

57. Յիմար կոչեա զքեզ և եղիցիս իմաստուն:

58. Պարտ է մարդոյ, զի ճանաչեցէ զԱստուած, և ճանաչելովն սիրեցէ և սիրելովն ժառանգեցէ, և ժառանգելովն լիցի բարի և երանելի:

59. Թէպէտ գարշութիւն քո ոչ յումեքէ տեսեալ լինի, ո՛ր մարդ, զի՞նչ արասցես յամենահայեաց աչացն Աստուծոյ, յորմէ ոչ ինչ թաքցին:

60. Որչափ բարձրագոյն և արժանաւորագոյն աստիճան ունի կուսութիւն, այնքան գեղեցիկ զարդ պիտոյ է նմա, այսինքն՝ զառաքինութիւն:

61. Ով կոյս եթէ տեսանիցես զընկերս քո ոսկով և մարգարտով և ակամբք պատուականօք զարդարեալ, մի նախանձիր ընդ նոսա, զի չեն զարդարեալ, այլ բռեալ և թէ երևին քեզ զարդ, սակայն ի ժամ մահուան ի բաց դնեն:

62. Տէր, յիրաւի գարշիս բնակիլ ի սիրտս ամբարշտաց, վասն զի է հնոց ժահահոտ և խողովակ պղծութեան:

63. Հանդերձեալ ես լնանիլ բարեաւ, հեղ զչարն. մեղու կամի լնուլ զքեզ Աստուած, այլ դու լցեալն ես լեղուաւ. ո՛ր դիցէ զմեղրն:

64. Այնպէս զօրեղ է սէրն. որ բռնադատէ զԱստուած, քանզի սէրն

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1990 թ. № № Ը—Թ-ից:

51. Ավելի լավ է հոգին ամբողջապես գանձով պատել, այսինքն հաղորդությամբ, քան անմաքուր ձևով մերձենալ:

52. Ավելի լավ է գոյություն չունենալ և չապրել, քան չարչարանքով գոյություն ունենալ և ապրել:

53. Պետք չէ խոսքեր արտաբերել, եթե բանականի հրամանով չեն:

54. Ինչպես օգտակար է լույսը աչքերին, այդպես էլ [օգտակար] է հավատքը մտքերին: Ինչպես որ ոչ մեկը առանց լույսի չի կարող ճանապարհ գնալ, այդպես էլ առանց հավատքի ոչ ոք չի կարող գնալ դեպի Աստված:

55. Սուրբ Գրքի ընթերցումը սնում է, խոկումը՝ կրակում է և աղոթքը զորացնում է:

56. Ինչ է Աստծուն հավատալը, եթե ոչ հավատով և սիրով դեպի Նա գնալը և միանալը Նրա անդամներին:

57. Հիմար կոչիր քեզ, և իմաստուն կլինես:

58. Պետք է որ մարդը ճանաչի Աստծուն, և ճանաչելով՝ սիրի, և սիրելով՝ ժառանգի [Նրան], և ժառանգելով դառնա բարի ու երանելի:

59. Ով մարդ, թեպետ քո գարշությունը չի տեսնվի ոչ մեկի կողմից, ինչ պիտի անես [սակայն] Աստծո ամենատես աչքից, որից ոչինչ չի թաքցրվում:

60. Որքա՜ն առավել բարձր ու արժանավոր աստիճան ունի կուսությունը, այնքա՜ն գեղեցիկ զարդ է պետք նրան, այսինքն՝ առաքինություն:

61. Ո՛վ կույս, եթե քո ընկերներին տեսնես ուկով, մարգարտով և պատվական քարերով զարդարված, մի նախանձիր նրան, քանի որ նրանք զարդարված չեն, այլ կրով սպիտակեցված, և թեև քեզ զարդ են երևում, սակայն մահվան ժամանակ դեն են նետում:

62. Տեր, իրավ է, որ գարշում ես ամբարիշտների սրտում բնակվելուց, որովհետև [այդ սիրտը] ժահահոտ հնոց է և պղծության խողովակ:

63. Ուզում ես բարությանը լցվել, թափիր չարը. Աստված ուզում է քեզ մեղրով լցնել, սակայն դու լեղիով ես լեցուն, ո՛ր դնի մեղրը:

64. Այնպես գորեղ է սերը, որ բռնադատում է Աստծուն, քանի որ սերը նրան երկնքից երկիր քաշեց և Տիրոջը ծառա դարձրեց, նրան կապեց սյունին, բևեռեց խաչափայտին:

65. Նա, որ առանց քեզ ստեղծեց քեզ, քեզ չի արդարացնի առանց քեզ:

66. Ինչո՞ւ ես ձգտում հեշտության և ուրախության, եթե քո գլուխը՝ Քրիստոս, որ Հոր իմաստությունն է, փախչելով աշխարհի ուրախությունից կամավոր դիմեց մահվան:

67. Քրիստոս ժխտեց ամեն երկրավոր բան, որպեսզի ցույց տա, որ դրանք մերժելի են:

68. Երկնային գավառը այնքան քաղցր է, որ եթե անգամ միայն մեկ օր այնտեղ չմնաք, պետք է մեր հազարամյա ժամանակը խախտել դրա համար:

69. Աղոթքը հոգու երկրայինից երկնային բարձրանալն է, որ փափագն է վերին մարմինների և աներևույթների բաղձանքն է:

70. Տերը այնքան չէր հորդորի մեզ խնդրել, եթե չկամենար տալ:

71. Ինչպես առանց եղանակի ձայնը ճաշի ձայն է, այդպես էլ աղոթքն առանց ջերմեռանդության եզան բառաչ է:

քարշեաց զնա յերկնից ի յերկիր և զՏէրն արար ծառայ, զոր կապեաց ընդ սեանն, բեւեռեցաւ ընդ խաչափայտին:

65. Որ ստեղծ զքեզ առանց քեզ, ոչ արդարացուցանէ զքեզ առանց քեզ:

66. Վասն է՛ր ցանկաս հեշտութեան և ուրախութեան, որ գլուխն քո Քրիստոս, որ է իմաստութիւն Հօր, փախեալ յուրախութենէ աշխարհի և դիմեալ կամաւ ի մահ:

67. Զամենայն երկրաւորս խոտեաց Քրիստոս, զի խոտելի ցուցանիցէ զնոսին:

68. Այնչափ է քաղցրութիւն երկնային գաւառին, որ թէ ոչ մնայք անդ, քայց միայն մի օր, պարտիմք զհազարամեայ ժամանակս մեր խոտել վասն նորա:

69. Աղօթք է ելումն հոգոյն յերկրաւորացս յերկնայինսն, որ է փափագ վերնոցն և բաղձանք աներևոյթիցն:

70. Տէրն ոչ այնքան յորդորէր խնդրելն ի մէնջ, եթէ ոչ կամէր զտալն:

71. Որպէս ձայն առանց յեղանակի է որպէս զձայն ճայելի, նոյնպէս և աղօթք առանց ջերմեռանդութեան է բջիւն եզանց:

72. Ոչ ումեք է արժանաւորել օգնականութեան Աստուծոյ առանց աղօթից:

73. Ոչ առանց պատճառի մեծ Աստուած եղև մարդ փոքրիկ, քանզի դէռ ուսուցման մարդոյս էր խոնարհութիւն Քրիստոսի:

74. Եկայք առ խոնարհն Քրիստոս, որք խոնարհ էք, զի նա է բնակարան խոնարհութեան և մի հեռանայք ի նմանէ:

75. Սրբեա միայն զսեմեակ սրտի քո, և ի ներքս է, որ արդարացուցանէ զքեզ:

76. Ով մարդ այնմ կենաց գիրկս արկ, ուր է կեանք առանց մահու, անմահութիւն առանց ծերութեան, լոյս առանց խաւարի, խնդութիւն առանց տրտմութեան, թագաւորութիւն առանց փոփոխման:

77. Ագահն արտաքոյ է լցեալ և ի ներքոյ՝ ունայն, մարմնով պարպատի և սրտին մուրանայ:

78. **Ջերոնիմոսի ասացեալ.** Միշտ գործեալ ինչ բարի, զի բանասարկուն գտանիցէ զքեզ զբաղեալ և ոչ մերձեցի առ քեզ:

79. Ապաշխարութիւն երկրորդ տախտակ է յետ նաւաբեկութեան:

80. Ամենեքեան, որք զվերինն ոչ խնդրեն, այլ՝ զոր ի վերայ երկրի, ոչ են պաշտօնեայք Քրիստոսի, այլ՝ Նեոին:

81. Միապէս է ինչս տալ կատակերգողաց և զոհել դիւաց:

82. Որքան պարկեշտանայր Ադամ, մնաց ի դրախտին, այլ յորժամ եկեր, իսկոյն արտաքսեցաւ:

83. Ոչ ինչ այնքան կուրացուցանէ զմիտս, քան զշուայտութիւն և արբեցութիւն:

84. Գիւնին և երիտասարդութիւն են կրկին բորբոքիչք հոգոյն:

85. Որ ինչ ոչ է իշխանութիւն լսողացն, դառնայ ի վտանգ խօսողացն:

86. Խորտկաց և յագեցմանց միշտ հետևի բղջախոհութիւն:

87. Մեզ՝ փութացելոցս երկնային գաւառն, պարտ է խնուլ զլսելիս ընդդէմ մահաբեր երգոց յուշկապարկաց:

88. Որ արբենայ գինով արդեն իսկ մեռեալ է և թաղեալ, ոչ թէ ըմպէ զգինին, այլ ըմպի և ընկղմի ի գինէն:

72. Ոչ մեկը Աստծո օգնության չի արժանանա առանց աղոթքի:
73. Մեծն Աստված առանց պատճառի փոքրիկ մարդ չդարձավ, որովհետև Քրիստոսի խոնարհությունը մարդու ուսուցման միջոց էր:
74. Ով որ խոնարհ է, եկեք դեպի խոնարհ Քրիստոսը, որովհետև նա է խոնարհության բնակարանը, և մի հեռանաք Նրանից:
75. Միայն դու սրբիր քո սրտի սենյակը, և ներսում է, որ կարդարացնի քեզ:
76. Ով մարդ, այն կյանքը որդեգրիր, ուր կա կյանք առանց մահու, անմահություն՝ առանց ծերության, լույս՝ առանց խավարի, ուրախություն՝ առանց տրտմության, թագավորություն՝ առանց փոփոխման:
77. Ագահն արտաքինից է լեցուն, իսկ ներսից՝ ունայն, մարմնով... իսկ սրտով մուրում է:

ԶԵՐՈՆԻՄՈՍԻ ԿՈՂՄԻՑ ԱՍՎԱԾ

78. Միշտ մի բարի բան արա, որպեսզի բանասերկուն քեզ զբաղված գտնի և չմոտենա քեզ:
79. Ապաշխարությունը երկրորդ տախտակաման է նավաբեկությունից հետո:
80. Բոլոր նրանք, որ Վերինը չեն փնտրում, այլ այն, ինչ որ երկրի վրա է, Քրիստոսի պաշտոնյաներ չեն, այլ Նեոի:
81. Նույնն են ծաղրածուներին ինչք տալն ու դներին զոհ մատուցելը:
82. Ադամն ինչքան պարկեշտ էր, մնաց դրախտում, իսկ երբ կերավ, իսկույն արտաքսվեց:
83. Ոչինչ այնքան չի կուրացնում միտքը, որքան շվայտությունն ու հարբեցողությունը:
84. Գինին և երիտասարդությունը հոգու զույգ բորբոքիչներն են:
85. Ինչ որ լսողների իշխանության մեջ չէ, վտանգ է դառնում խոսողների համար:
86. Խորտիկներին և հագեցումներին միշտ հետևում է բղջախոհությունը:
87. Մենք՝ երկնային գավառ շտապողներս, պետք է փակենք մեր ալանջները ոգիների մահաբեր երգերի դեմ:
88. Ով որ հարբում է գինուց, արդեն իսկ մեռած և թաղած է, ոչ թե գինի է խմում, այլ խմվում և խեղդվում է գինուց:
89. Ամուսնությունը լցնում է երկիրը, սակայն կուսությունը լցնում է երկինքը:
90. Անհնար է, որ մարդը երկու կյանքում փառավոր լիներ, այսինքն այստեղ և հանդերձյալ կյանքում:
91. Նա է գործությամբ մեծ, ով խոնարհությամբ հաղթում է նախանձին:
92. Խորշի բեշտությունից ինչպես գարշելի բաներից, որովհետև, ավազակի նման գրկում են, որպեսզի խեղդեն մեզ:
93. Յուրաքանչյուր գործից առաջ տերունական աղոթքն ասա, և կնքիր խաչի նշանով (և խաչակնքիր), եթե կարդաս, հետո կաղոթես:
94. Ինչպես ավելի մաքուր պետք է պահվեն կյանքն ու եկեղեցու անոթները քան աշխարհիկ անոթները, այսպես էլ եկեղեցու պաշտոնյաները պետք է ավելի մեծ սրբություն ստանան քան աշխարհականները:
95. Երկյուղածությունն է պահապանը բոլոր առաքիճությունների:

(Ծարունակելի)

89. Ամուսնութիւն լնու զերկիրս, այլ կուսութիւն լնու զերկինս:

90. Անհնար է մարդոյ յերկոթին կեանս լինել փառաւոր, այսինքն՝ աստ
և ի հանդերձեալն:

91. Նա է մեծ զօրութեամբ, որ խոնարհութեամբ յաղթե՛ նախանձուն:

92. Խորշիր ի հեշտութենէ իբրև ի գարշելի իրաց. զի, ըստ օրինակի
աւագակի, գիրկս արկանեն, զի խեղդ արկցեն զմեզ:

93. Սկիզբն իւրաքանչիւր գործոյ յառաջացու զաղօթսն տէրունական և
կնքեա նշանաւ խաչին, թէ ընթեռնուցու՝ զկնի աղօթեսցես:

94. Որպէս սրբագոյն պահելի է զկեանս և զանօթս եկեղեցոյ քան
զանօթս աշխարհականս, սոյնպէս պաշտօնեայք եկեղեցոյ մեծագոյն սրբ-
բութիւնս պարտին ստանալ քան աշխարհականս:

95. Երկիւղ է պահապան ամենայն առաքինութեան:

(Շարունակելի)